

ՊԱՏՄԱԿԱՆ

ՆԻՒԹԵՐ ԱՂՈՒԱՆԻՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Ա

Ստորագրեալս ծառայ Բրիտոսի, Քանդի յարգանտէ Մօրն իմոյ սրբոյ եկեղեցւոյ Հայաստանեայց կոչեցեալս եմ ժառանգ Աստուծոյ, և զկնի միաբան սրբոյ Աթոռոյն Գանձասարու՝ ունելով զտարփումն և զյօժարութիւն հոգւոյ իմոյ հաստատեալ անդստին առ պաշտօնատարութիւն սպասահարկութեան հոգեւորական կարգի եկեղեցւոյ Հայաստանեայց, և ըստ բանի Աստուածայնոյն Պաշտօնի, Բ. Տիմ. 3, 1: Վերացուցեալ զնոյնս մինչև ի կոչումն Առաքելական բարձրագոյն Աստիճանի Եպիսկոպոսութեան, ի հասանիլ ժամանակի արժանապատիւ Մետրապօլիտն յիշեալ Աթոռոյն Գանձասարու յարգոյապատիւ Սարգիս Արքեպիսկոպոսն կամեցեալ արժանացուցանել զիս այնմիկ բարձրագոյն Աստիճանի, շնորհեաց ինձ գիր վկայական հաւատարիմ, նոյնպէս և բոլոր ժողովուրդքն յիշեալ վիճակի զբաղմանիք միաբանական խնդիրս, որովք ներկայացեալ ի սպասու արժանընտիր Վեհափառ Վաթուղիկոսի և Ծայրագոյն Պատրիարքի ամենայն Հայոց Տեառն Եփրեմայ Աստուածարեալ Սրբազնակատար Քահանայապետի Հայաստանեայցս Առաքելական սուրբ եկեղեցւոյ Բրիտոսի, յամի Տեառն 1820. յամսեանն սեպտեմբերի 20. ի Գերագահ Բրիտոսոսհիմն մայր Աթոռն ամենայն Հայոց ի սուրբ Վաթուղիկէն Էջմիածին: Վերահասուութեամբ սուրբ ժողովոյն բարձրագոյն Խորհրդարանի նորին ընտրելի դատեցաւ արժանացուցանել զիս այնմիկ առաքելական բարձրագոյն Աստիճանի յանուն միաբանութեան սրբ-

բոյ Աթոռոյս միածնախիջի, վասնորոյ և յաղագս ստուգութեան ճշմարիտ կամաց իմոց, որպէս առաջի նորին Ծայրագոյն Քահանայապետութեան՝ նոյնպէս և առաջի Սինոթական պատուելի Խորհրդականացն կամաւ իմով և յօժարութեամբ արձանացուցանեմ ի գիր զմաքուր զգացողութիւնս հոգւոյ իմոյ և սրտի, և երգնում յանուն ահաւորին Աստուծոյ առաջի սրբոյ Խաչի նորա և սուրբ Աւետարանի, զի մինչև ցվերջին շունչն իմ պահպանեցից զճեռեալ պարականոցութիւնս:

Նախ՝ զամենայն կանոնս լուսաւորչացն Հայաստանեայց Եկեղեցւոյ և զծէսս, որք պահպանին ի գերագահ մայր Աթոռն ամենայն Հայոց ի սուրբ Կաթողիկէն Էջմիածին՝ պահիցեմ և կատարիցեմ անփոփոխ և անբակտելի, և ոչ բակտեցից զպսն ոչ յաւելմամբ և ոչ նուազմամբ ինքնին առանց սահմանադրութեան հոգեւորական ժողովոյն և առանց հրամանի Սրբազնասուրբ Կաթողիկոսին:

Երկրորդ՝ եղէց հաւատարիմ գերագահ մայր Աթոռոյն ամենայն Հայոց սրբոյ Կաթողիկէ Էջմիածին՝ որպէս որդի առ ծնողս իւր, և հնազանդ յամենայն կեանս իմ յաջորդի սուրբ Լուսաւորչին ամենայն Հայոց Սրբազնասուրբ Կաթողիկոսին Յեառն Եփրեմայ և ապա օրինաւոր յաջորդաց նորին և Սրբազան ժողովոյն Բարձրագոյն Խորհրդարանի սրբոյ Կաթողիկէ Էջմիածին՝ կատարելով զհրամանս նոցին կատարեալ հպատակութեամբ, որպէս ի ներկայութեան իննեակ դասակարգութեանց հոգեւորականաց սրբոյ Եկեղեցւոյ և բազմաթիւ ժողովրդեանն առաջի ահաւոր սուրբ սեղանոյ Աստուածընկալ սրբոյ Յաճարին պարտին կապակցիլ հրատարակական երդմամբ յաւուր ձեռնադրութեան իմոյ Եպիսկոպոս:

Երրորդ՝ որպէս ինքն Ծայրագոյն Գլուխն Եկեղեցւոյ Հայաստանեայց Սրբազնասուրբ Կաթողիկոսն և համայն Աստիճանի և կարգի Միաբանք սրբոյ Կաթողիկէ Էջմիածին մայր Աթոռոյն համաձայն Առաքելական և Հայրապետական կանոնադրութեանց զինքեանս ստորագրեալ են սահմանեալ կառավարութեան հոգեւորական սրբազան ժողովոյն Բարձրագոյն Խորհրդարանի սրբոյ Էջմիածին, ես ևս անբաժանաբար ի համայն միաբանութենէ Արարատեան Աթոռոյն

մաքուր սրտիւ ստորագրեմ զիս այնմ կառավարութեան, և կապակցիմ հնազանդիլ բոլոր օրինաց և կանոնադրութեանց՝ որ ինչ ելցեն ի Բարձրագոյն Խորհրդարանէ սրբոյ Էջմիածնի մայր Եկեղեցւոյն Հայոց վասն բարեկարգութեան և օգտի և գեղեցկադարձութեան սրբոյ մայր Աթոռոյն, և կամ վանորէից և եկեղեցեաց, և կամ վասն առ հոգեւորականս և առ ժողովրդականս պատկանելոց՝ կատարել զայնս ամենայն արժանապարտ յարգութեամբ:

Զորորդ՝ ի վերադարձուցանելն զիս զկնի ձեռնադրութեան իմոյ ի յիշեալ Աթոռն Գանձասարու առ առաքօղն, զիս յարգոյ Մետրապօլիտ Սարգիս Արք եպիսկոպոս հարազատ Միաբանն սրբոյ Էջմիածնի, ոչ կարողացայց թարց հրամանի նսրա ընդ լայնել զիշխանութիւն եպիսկոպոսութեան իմոյ, յամենայն գործս յանձնեցեալս ինձ ի նմանէ պաշտպանեցից զհարազատութիւն և զջերմեռանդութիւն առ նոյն Աթոռն Գանձասարու և առ եղբայրութիւն միաբանութեանն նորին: Ոչ օտարացայց անտի և ոչ բաժանեցայց, յեղբայրութենէ միաբանութեան նորա: Իսկ եթէ տէր միարասցէ, պատճառեսցի ինձ անհնարին ստիպումն անելք հարկի՝ դադարն իմ լիցի մայր իմ շնորհածին Աթոռն ընդհանրական սուրբ կաթողիկէն Էջմիածին: Զարդիւնս ժողովրդեան նուիրեալս յանուն Աստուծոյ ի պէտս Աթոռոյն Գանձասարու և միաբանութեան նորա ոչ վատնեցից անհարազատ խորհրդով ըստ հաճոյս անձին իմոյ և կամաց:

Հինգերորդ՝ որպէս հրամանն է Առաքելական՝ ոչ եղէց վաղվաղուկ ի ձեռնադրութիւն, և որպէս կանոն է սրբոց Հարց՝ ի վիճակս այլոց ոչ տաց ումք զկարգ՝ ի միոյ աստիճանէ մինչև ցեօթներորդն՝ առանց կամաց Առաջնորդի վիճակին այնմիկ. նոյնպէս ոչ ձեռնադրեցից թարց լաւապէս քննութեան և վերահասութեան ըստ հաւատոյն՝ ըստ գիտութեան՝ ըստ վարուցն և ըստ այլ հարկաւոր պարագայիցն: Այլ՝ ձեռնադրեցից միայն զայնպիսիսն թէ հրամանաւ Մետրապօլիտին իմոյ և թէ այլ վիճակաց Առաջնորդացն, որք իցեն վկայեալք ի հաւատոս ուղղափառ դաւանութեան սրբոյ Եկեղեցւոյ Հայաստանեայց, երկիւղածք, բարեբարոյք, կայուն բարուք և հաւատարիմք յաղագս ոչ լինելոյ դիւրադարձք, մտախաբք, փոփոխաբարոյք, աստանդականք, շատա-

շըրջիկը, ծակամուտք և անարգութիւն պատուական կարգի և սուրբ Աստիճանի վարդապետութեան և քահանայութեան: Եւ ի ձեռնադրելն զայնպիսին՝ առից ի նոցանէ զձեռագիր երաշխաւորութեան միջնորդացն՝ այնու դաշնադրութեամբն զի մինչև ցվախձան մնալ ունիցին առ այնս՝ յուսմ անուն ձեռնադրեցանն. այլ՝ ի ստիպել հարկին՝ դիմեցեն ուղղակի ի գիրկս Մօրն լուսոյ սրբոյ Վաթուղիկէ Էջմիածնի, և պաշտպանեսցեն անդէն զկարգ աստիճանի իւրեանց: Ըստ այսմ և եթէ ինձ պատահեսցի, դիմել անդ և մնալ ի միաբանութեան և պաշտել զկարգս զամենայն աւուրս կենաց իմոց:

Եւ վերջապէս, եթէ վարիցիմ ես ներհակ այսմ ուխտի և պայմանի իմոյ, և արարից զինչ և իցէ ընդդէմ օրինաց և ծիսից Հայաստանեայց եկեղեցւոյ, նմանապէս և ընդդէմ Առաքելական և Հայրապետական օրինաց, և կամ նշմարեալ եղէց յանհաւատարմութեան առ սուրբ Աթոռն և նորին միաբանութեանս. այլ և՛ եթէ եղէց ներհակ Սըրբազնասուրբ Վաթուղիկոսին և Հայրապետին և կամ Բարձրագոյն Խորհրդոյ Սինօթական կառավարութեան արարատեան Աթոռոյն. յայնժամ համաձայն օրինաց ենթարկեցից զիս դատապարտութեան, որոյ վասն իսկական ձեռագրութեամբ իմով ստորագրեմ ահա աստէն և կնքեմ

Յաւմ ճնառն 1820 սեպտեմբ. 26. ի Բաղրատոյն
Խորհրդարանն որոյն կաթողիկէ Էջմիածնի

Ի հաստատութիւն վերոյ գրեալ բանիս, և ի հաւատարմութիւն տեսողաց, ըստորագրեցի, Գանձասարցի Հասան Զաւլալեան,

Միաբան սրբոյ Վաթուղիկէ Էջմիածնի և սրբոյ Աթոռոյն Գանձասարու Պաղտասար վարդապետ եղբօր որդի յիշեալ Մեաթապօլսին:

Բ.

Քրիստոսապսակ ինքնակալ կայսեր Նիկօլայ Պաւլօ-վիչին:

Գերահռչակ սրբազան Արք եպիսկոպոսաց սուրբ սէնօթին մեծ օգտակար և հաւատարիմք: Երկնաւոր կայսեր փոխանորդ երկրաւոր կայսեր:

Արեգական պայծառ սրբագումար սուրբ սէնթին միջ-
նորդութեամբ խորհուրտատուութեամբ հաստատէ, զեկեղե-
ցիս և պաշտօնեայս իմա:

Ի Ղարաբաղու հայոց Արք եպիսկոպոս Պաղդասար Հա-
սանջալաբեանէ. խոնարհաբար խնդիր:

Երանելի թագաւորն Տրդատ հայոց, և Ուռնայր ա-
ղուանից հայոց, ևս Գրիգոր Լուսաւորիչն մեր, բարեհաճեալ
ի 340 յամի. էրեց որդի սուրբ Արգանէսի և Թոռն սրբոյ
Գրիգորի Լուսաւորչին, սուրբն Գրիգորիս օծեցաւ կաթուղի-
կոս և հաստատեցին ի վերայ չորից աշխարհաց աղուանից,
վրաց, հիւսիսականաց, և ձենաստանեայց, եւ երկրորդ սըր-
բոյն Գրիգորիսի կաթուղիկոսին սուրբ քարօզութեամբն
իւրով վերըստին լուսաւորեայց զաշխարհս. և ինքն նահա-
տակեցաւ վասն անուանն Քրիստոսի. ի Վասնիարամ դաշտի
մերձ ի Վասպից ծովուն և ի Դարբանդ քաղաքի, և աշա-
կերտն իւր բերեալ զսուրբ մարմին նորին երկիրս զարա-
բաղու և թաղեցին ի նշանաւոր եկեղեցոջն Ամարասայ զոր
հիմնադրեալ էր ի սրբոյն Գրիգորի Լուսաւորչէն. և մինն
աշակերտաց նորին Զաքարիայ անուն օծեցաւ կաթուղիկոս
ի տեղի նորայ և ի կաթուղիկոսէն սրբոյն Գրիգորի հաստա-
տեցաւ յատուկ կաթուղիկոսարան հայոց աղուանից Աթուոյս
Գանձասարայ սրբոյն Գրիգորիսի ուր և մինչև ցարդ կաթու-
ղիկոսունք հայոց աղուանից շարունակապար, 80 մինչև ի
կաթուղիկոս Եսայեայ և Ներսէս կաթուղիկոսն աղուանից.
յօրէ յայնմանէ սահման և կարգ, ի ժամանակս թագաւո-
րն հայոց և աղուանից յայսպէս էր յորժամ մեռաներ կա-
թուղիկոսն աղուանից, հայոց կաթուղիկոսն գայր յաղուանս
և օծանէր կաթուղիկոս աղուանից, և յորժամ մեռանէր կա-
թուղիկոս հայոց և կաթուղիկոս աղուանից գնայր ի հայս և
ծանէր նոցա կաթուղիկոս որպէս ի 963 յամի Անանիայ կա-
թուղիկոսն հայոց մեռաւ և Յովհանէս կաթուղիկոս աղուա-
նից գնաց, ի յայսմ ամի և Վահան արք եպիսկոպոսն նոցին
ծեաց կաթուղիկոս ի տեղի Անանիայ կաթուղիկոսին, և ին-
քն դարձաւ յաղուանս ի յաթոռն իւր, և ի 1036 յամի
Յովսէփ կաթուղիկոսն աղուանից գնաց ի հայս ի յԱնի բա-
ւքն և անդ Պետրոս Արք եպիսկոպոսն նոցա հաստատեաց
աթուղիկոս ի տեղի Թէոկորոս կաթուղիկոսի նոցին և 1082

յամի. Ստեփանոս կաթողիկոս աղուանից դնաց ի վրաս-
տուն և ի վանս Հաղբատայ, և անդ Բարսեղ Արք եպիսկո-
պոսն օծեաց կաթողիկոս նոցա և առաքեաց յԱնի բաղաք և
ինքն դարձաւ յաթուռն իւր աղուանից որպէս արձանացեալ է ի
պատմութեանց հայոց. իսկ և 1363 յամի որ իսբառ բարձուն-
եղև թագաւորութեանց հայոց ընդ ամենայն տեղիս, ընդ
նմին և փոխեցաւ կարկառութիւն և սահմանք կաթողիկոսացն
մինչև ի 1489 յամի որ արբան պարսից Եաղուր հաթուրանունն
կոչեցեալ զօրացեալ և տիրեաց ի վերայ աշխարհացս. և
զկնի նոցայ, 1500 յամի զօրացան Սէֆիեանքն, շահ Սէֆի-
շահ Իսմայել, շահ Բահմազ, շահ Աբազ և զկնի նոցին ժա-
ռանքն որք տիրապետեցին. մինչև ամս որոց զյետինն էր
շահ սօլթան Հիւսէին, ի ժամանակի նոցին ղթագաւորու-
թիւն տարաձայնութեամբ պլոց խառնակեցաւ:

Բայց ի ժամանակս յիշեալ պարսից արքայից հրովար-
տակօք հաստատեալ լինէին թէ կաթողիկոսունք Երեւանու
և թէ կաթողիկոսքն աղուանից հայոց որպէս 1659 յամի
ի ժամանակս Պետրոս կաթողիկոսին: Կաթողիկոսն երեւանու
երկրորդ շահ Աբաս արքայէն, ի միոյ հնարիւ հրովարտակ
էր առեալ վասն անուան իւրոյ զի դարձուցէ զկաթողի-
կոսութիւն և զհայոցս աղուանից ինքեան:

Բայց Պետրոս կաթողիկոսն աղուանից լուեալ և խնդ-
րագրով յայտնեաց նոյն երկրորդ շահ Աբազ յարքային պար-
սից և վերստին հրովարտակաւ նորին հաստատեաց զկաթո-
ղիկոսութիւն իւր, որ ահայ զնոյն հրովարտակն ունիմ ի ձեռս
իմ: Ի մէջ հրովարտակին իւրոյ յայլ թէ է ղէնորս (Ք) Երեւա-
նու կաթողիկոսին. յայտնի է ի սրբագումար միաբանութեան
ձերոյ բարձրագոյն և սուրբ մանէֆեստ նորին կայսերական
մեծութեան տեսանելով որպէս նաւաբեկեալ դիմեցաք ի նա-
ւահանգիստ. քանզի ի 1703 յամի խնդրեցաք հրաման վա-
սըն շինելոյ եկեղեցիք Հաշտարխան քաղաքի որ ինքն մեծ
պապն իմ հանգուցեալ եսայի կաթողիկոսն օծեաց երանելի
և յաւիտենական փառաց արժանի ի մեծ կայսէր սուրբ Պետ-
րոսէն: Ի 1724 և ի 1726 յամի ընկալաք բարձրագոյն և
ողորմած զրամատք հանգուցեալք Եսայի և Ներսէս նախնիքն
իմ. 1763 յամի մեռաւ Ներսէս կաթողիկոսն մկր և ի նմանէ
օծեցեալ էր, Իսրայել կաթողիկոսն փոխանորդ իւր: Ի ժա-

մանակի անյաջողութեան մերոյ ընդդէմ կանօնի և եղբայրական սիրոյ հնարիւ կաթուղիկոս Երևանու Սիմօնի 1768 յամի անուամբ իւրեանց ստանան ղրամատ ի կայսերական մեծութենէն և մեք փնացաք զրկեալ և յուսահատ բնակեալ հայոց ազգն իսկ զքնէ սեփական ժողովուրդ յաթոռոյս Գանձասարայ սրբոյն Գրիգորիսի ի 1769 յամի զրկեալ ի մէջ նմանապէս Յեղիսպետապօլ քաղաքն որ սեպական մեր յաթոռոյն էր և ի յաթոռէս 18 ժամու ճանապարհ է զայն ևս զրկեալ խլեցին յաթոռէս մերմէ ի 1804 յամի. և ի 1815 և ի 1816 և ի 1830, ամաց սրբազնագոյն Եփրեմ կաթուղիկոսն ամենայն հայոց ըստ հոգևորական բարեկարգագորութեան հայոց Ղարաբաղու Նուխու Շամախու Բաքուսոյ և Դարբանդու նահանգացն նոցին հայոց արք եպիսկոպոսութիւնն վերստին հաստատեաց ի վերայ աթոռոյս մերոյ և մեզ Խսկ Յովհանէս սրբազան կաթուղիկոսն ընդդէմ գրութեան նորին, ի 1831 յամի խլեաց ի մէջ թողով զխղճալի Աթոռոյս ողորմելութեան և փնաց թէմ և ժողովուրդ Աթոռոյս մեր և արք եպիսկոպոսութեան մերում միմայն զմանաւոր հայոց ազգն Ղարաբաղու և Եմ եղբայր թուռն Եսայիայ կաթուղիկոսին և քեթուռն Ներսէս կաթուղիկոսին՝ և ունիմ ի ձեռս իմ զբազում հրովարտակք արքայից պարսից և ապացուցութիւն, որ երբէք չէ խլեցեալ, անկանոն զսեփական ժողովուրդն յաթոռէս մերմէ և ի մէջ թէ ի ժամանակս կաթուղիկոսութեան և թէ Սրբ եպիսկոպոսութեան մերոց և ոչ ցանկանալով վասն նախնի կաթուղիկոսութեան ի տանս աղուանից, այլ աղաչեմ վասն զսեփական ժողովուրդեան աթոռոյս մերոյ որ զրկելով զմեզ տիրապետեալն ինքեանք:

Ասանորոյ որպէս Ղազար ի Քրիստոսէ ստացաւ յարու-թիւն, նոյնպէս և մեք ի Քրիստոսադիր կայսերութենէ բան-դի մինչ ամենողորմ և մեծի հովանաւորութիւն ձեր, լուսա-փայլ տարածեցաւ հզօր զօրութեամբ տիրապետեաց, յաշ-խարհաց մեր, ահայ ժամանակ գտանելոյ, խնդիր մատուցաք յաթոռոյ կայսերական մեծութեան, և այս խնդրեմ, ի սըրբազնասուրբ գումարութենէդ ի փառս խաչելոյն Քրիստոսի, ողորմել զմեզ միջնորդութեամբ խորհուրդատուութեամբ նրման ոսկիսբերան դատաւնելով շնորհել ողորմութիւն վասն ապակայ հովանաւորութեան, զի ողորմած յուբաղիւ հաս-տատել բարեհաճեսցիք, և շնորհել մեզ կրկին ողորմած

ղրամատ Արք եպիսկոպոսութեան ըստ որում յիշեալ բղա-
քաց հայոց ժողովուրդն սեհպական ժողովուրդեան Աթոռոյս
գանձասարսյ սրբոյն գրիգորիսի:

Ամենահպատակ ծառայ և աղօթարար խոնարհ Արք
եպիսկոպոս հայոց զարաբաղու

Պաղտասար Հասանջալալեան:

1833 յամի Տեառն

ի Աթոռն գանձասար

նուբրի 23

Գ. ԵՊ. ՍՐՈՒԱՆՏՏ. ՆԱՄԱԿԸ Հ. ԱԼԻՁԱՆԻՆ

Պատուական Ս. Հայր.

Մայիսին գրեցի Ձեր Հայրութեան թէ կ'երթամ յԱյ-
րարատ և նահապետիդ ողջոյն տամ Մասիսին:

Այժմ վերադարձած եմ. և փոխադարձը Ձեզ կը բե-
րեմ: Ողջոյն Բեզ. Միածնի իջման Ս. տեղէն. ողջոյն Երկ-
նահանգոյն Ս. տաճարին կամարներէն: Ողջոյն Գայիանէի և
և Հռիփսիմէի Ս. շիրիմներէն. Ս. Մեսրոբայ գերեզմանէն:
Ողջոյն մեր լուսատուի Խոր Վիրապէն. Գեղարդայ հիանալի
խորաններէն: Ողջոյն Այրարատի հողէն ու ջրէն. Հրազդանէն
ու Երասխէն: Ողջոյն Աստուածամուխ Ս. Գեղարդէն. ողջոյն
Թաղէոսի և Լուսաւորչի ս. Աջերէն, և այլ բազում սըր-
բութեանց և սրբոց օրհնեալ մասերէն: ողջոյն Մանուկ և
Ալեոր Մասիսներէն: Ալեորն կընմանէր Բոյդ պատկերին.
գագաթը ճերմակ. երեսը ճերմակ. ալիք ճերմակ և փա-
ռաւոր. աչկունքը սուր. խոր, և խոշոր: Բերանը փակ՝ բայց
մշտախօս և բարձրաձայն: Սրտի տեղը՝ կրակով լի, որ կը
վառի անմարելի, և կը շարժէ ամպն ու անդունդ. Հայոց
սրտեր հանէ 'ի Թունդ. ինչպէս Բո սիրտ իւր կրակով, իւր
նուագով պայծառ հոգւով, ծածկեալ սիրոյդ: ...

Մնամ ս. աղօթիցդ կարօտ

Սրտանձտեան Գարեգին եպիսկոպոս

1886 յուլիս 19

Տրապիզոն.